DOI: 10.57192/18291864-2023.2-271

Երուանդ Փամպուքեան, Հ. Յ. Դաշնակցութեան ծածկանուններու բառարան (անձնանուններ, տեղանուններ, թուանշանային ծածկագրեր), «ՎԷմ» մատենաշար, թիւ 5, Եր., «Լուսակն», 2023, 253 էջ*:

Բանալի բառեր – ՀՅ Դաշնակցություն, բառարան, ծածկանուն, շիֆր, գաղտնաբառ, անուն, տեղանուն, գործիչ, Ռուսաստան, Թուրքիա, ազատամարտիկ, լուծույթ:

Մուտք

Վաստակաշատ պատմաբան **Երվանդ Փամբուկյանն** իր տասնամյակների գիտահետազոտական աշխատանքների ընթացքում տարբեր սկզբնաղբյուրներից՝ արխիվային փաստաթղթերից, նամակագրությունից, հուշագրություններից, մամուլից, բարեխղճորեն հավաքել և ընթերցողի դատին է հանձնել ինքնատիպ մի աշխատություն, որը ՀՅ Դաշնակցության գործիչների, կառույցների ու նրանց գործունեության վայրերի **ծածկանունների** (**pseudonyms**) համահավաք ներկայացման առաջին փորձն է:

Հայտնի է, որ գոյություն ունեն բառարանների բազում տեսակներ, բայց դրանցից թերևս ամենահետաքրքիրն ու խորհրդավորը կարելի է համարել ծածկանունների բառարանը: Քանզի ծածկանունների գործածության հիմքն ու շարժառիթը եղել է կոնկրետ անձի իսկական անուն-ազգանունը կամ կուսակցական կառույցի ու նրա գործունեության վայրի անվանումը «աչքից» հնարավորինս հեռու պահելու, հրապարակ չհանելու, չբացահայտելու զուտ գաղտնապահական (կոնսպի-

* Ընդունվել է տպագրության 03.06.2023:

ռատիվ) նպատակը: Հակառակ պարագայում դրան կհետևեին հետապնդումներ, ձերբակալություններ, քաղաքական դատավարություններ, բանտ, աքսոր և այլն:

Ծածկանվան կիրառումը համաշխարհային երևույթ է, որի նպատակն է այս կամ այն երկրի քաղաքական գործիչներին ու կառույցներին, մշակույթի դեմքերին ներկայացնել տվյալ պետական իշխանության տված ազատության սահմաններում: Ծածկանունների գործածության սկիզբ են համարվում 19-րդ դարի կեսերը, ինչը հավանաբար կապված էր եվրոպական հեղափոխությունների ու ժողովրդավարական արժեհամակարգի արմատավորման հետ: Ուստի ծածկանունները սովորաբար ավելի հաճախ գործածվել ու շրջանառվել են այն պետություններում, որոնցում ուժեղ են եղել քաղաքական հետապնդումները, հալածանքները և այլն: Մեր տարածաշրջանում այդպիսի բռնավարչակարգերից էին Օսմանյան Թուրքիան և ցարական Ռուսաստանը, մասամբ նաև՝ շահական Իրանը, որոնցում էլ տասնամյակներ շարունակ գործել է ՀՅ Դաշնակցությունը:

1. Բառարանի բնույթը և առանձնահատկությունները

Ընթերցողի դատին հանձնված ծածկագրերի այս համահավաք բառարանում առաջին անգամ ամբողջական ձևով ի մի են բերված ՀՅ Դաշնակցության գործիչների, կուսակցության տարածքային կառույցների և նրանց գործունեության վայրերի ծածկանունները նրա հիմնադրման պահից մինչև սփյուռքյան կեցության նախնական շրջանը՝ 1930-ական թվականները: Քանի որ ՀՅ Դաշնակցությունը եղել է հեղափոխական կուսակցություն և պայքարել հայ ժողովրդի ու երկատված հայրենիքի ազատագրության համար, նրա գործիչներն ու կառույցներն անհրաժեշտաբար դիմել են ընդհատակյա գործունեությանը բնորոշ գաղտնագիր (ծածկագիր) կապի ձևերին ու եղանակներին:

Մեկ աշխատության մեջ կուսակցական գործիչների անունների ու տեղանունների և տարբեր մարմինների ծածկագրերի ամփոփումը հսկայածավալ և խիստ աշխատատար գործ է: Նման աշխատանք իրականացնելու, անգամ նման թեման բարձրացնելու, համակարգելու և հրապարակ բերելու համար սովորաբար պահանջվում է ոչ թե մեկ անձի, այլ ուսումնասիրողների մի ստվար խմբի՝ տարիների հետևո-

ղական աշխատանք: Ե. Փամբուկյանը դա կատարել է միայնակ, ինչը խիստ գնահատելի է:

Ընթերցողի մոտ կարող է հարց ծագել, թե ինչու էր անհրաժեշտ հատկապես ՀՅԴ կուսակցությանը վերաբերող ծածկանունների առանձին բառարան հրապարակել: Դժվար չէ հասկանալ, որ դա պայմանավորված է մի քանի հանգամանքներով: Ամենից առաջ ՀՅԴ-ն 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ իրականության ամենազանգվածային, տարածականորեն ամենաընդգրկուն և ամենաազդեցիկ կուսակցությունն էր: Իսկ որքան խոշոր ու մասշտաբային է տվյալ քաղաքական ուժը, այնքան մեծաթիվ պիտի լինեն նրա գործածած ծածկանունները: ՀՅԴ-ն իր ծածկագրերի թվաքանակով կարող է մրցակցել նույնիսկ այդ ժամանակի Համառուսաստանյան սոցիալ-դեմոկրատական (բոլշևիկյան) կուսակցության հետ: Բավական է արձանագրել այն փաստը, որ 1907 թ. օգոստոսին Շտուտգարտի համաժողովում ռուսական էսէռների կուսակցության երաշխավորությամբ Սոցինտերնին անդամագրված ՀՅ Դաշնակցությունն ունեցել է 165 հազար անդամ[1]: 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո ՀՅ Դաշնակցության հակառակորդ «Մշակ» թերթը, արտատպություն կատարելով Թիֆլիսի «Кавказ» թերթից, խոստովանում էր, որ «Դաշնակցությունն, անկասկած, ամենաազդեցիկ հայ կուսակցությունն է»[2]: Ուստի այսօր էլ ՀՅԴ պատմությանը քիչ թե շատ ծանոթ յուրաքանչյուր ոք գիտի բազմաթիվ դաշնակցական գործիչների ու ազատամարտիկների անուններ, որոնք իրականում եղել են նրանց ծածկանունները, սակայն այնքան հաճախակի են գործածվել, որ փաստորեն ընկալվում են որպես նրանց իսկական անունը կամ ազգանունը: Օրինակներ, որքան ուզեք՝ Առաջին հանրապետության հիմնադիր **Արամը** (Սարգիս (Սերգեյ) Հովհաննիսյան), ՀՅԴ հիմնադիրներից **Ռոստոմը** (Ստեփան Ջորյան) և այլն:

2. Դիտարկումներ բառարանի կառուցվածքի վերաբերյալ

Կառուցվածքային առումով բառարանը կազմված է երեք բաժնից՝ ա) **Անձնանուն-ծածկանուններ**, բ) **Տեղանուն-ծածկանուններ** և

1 Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1457, ց. 1, գ. 237, թթ. 53, 55 և 58:
2 «Մշակ», Թիֆլիս, 27 հունիսի 1917 թ.:

գ) **Թվանշանային ծածկագրեր**[3]: Ընդ որում, կառուցված է այն սկզբունքով, որ տվյալ բաժնի մի մասում տրվում է տվյալ անձի իսկական ազգանուն-անունը՝ իր ծածկագրված տարբերակով կամ ավելի հաճախ՝ տարբերակներով (էջ 12–61), իսկ մյուս մասում հակառակ հաջորդականությամբ տրվում է նրա առավել տիպական ու գործածական ծածկանունը[4], իսկ դրա դիմաց՝ ազգանուն-անունը (էջ 62–127):

Այդ նույն սկզբունքով են կառուցված տեղանուն-ծածկանունները. առաջին մասում նախ՝ իսկական տեղանունները, ապա՝ դրանց ծածկանունները (էջ 128–156), երկրորդ հատվածում դարձյալ հակառակ հաջորդականությամբ նախ տրվում է տվյալ վայրի ծածկանունը, ապա՝ իսկական անվանումը (էջ 158–217) և այդպես շարունակ:

Ակներև է, որ նման սկզբունքով բառարանի ձևավորումը կազմողից ահռելի աշխատանք է պահանջել, սակայն դրա շնորհիվ էապես հեշտացել է տվյալ հիմնահարցերով զբաղվող անձանց գործը: Առանձնապես կուզենայինք ընդգծել բառարանի՝ **ծածկանուններով** սկսվող հատվածները, քանզի հայտնի է, որ հատկապես գաղտնի փաստավավերագիր նյութերում սովորաբար նշված են լինում գործիչների ծածկագիր անուն-ազգանունները: Ուստի այս բառարանը հնարավորություն է տալիս առանց մեծ ջանքերի պարզելու և բացահայտելու, թե ում մասին է խոսքը: Նույն սկզբունքով ծածկագրվել են նաև կուսակցական մարմինների և նրանց գործունեության վայրերի անվանումները:

Եվ վերջապես, բառարանի վերջին բաժինը նվիրված է թվանշանային ծածկագրերին, որոնք անհամեմատ ավելի բարդ՝ թվայնացված կառուցվածք ունեն: Նման պարագայում ծածկագիր տեքստն է թվանշաններով կազմված, և դրա ընթերցման, վերծանման ու բովանդակության ընկալման համար անհրաժեշտ էր, որ նամակը, գրությունը կամ հաղորդումը ստացողն իր ձեռքի տակ ունենար նաև այդ թվանշաններն ապակոդավորող, այսպես կոչված, «բանալի» ծածկագրերը:

---

3 Տե՛ս **Փամպուքեան Ե.**, Հ.Յ. Դաշնակցութեան ծածկանուններու բառարան (անձնանուններ, տեղանուններ, թուանշանային ծածկագրեր), «Վէմ» մատենաշար, թիւ 5, Եր., «Լուսակն», 2023, էջ 12-127, 128-217 և 219-251:

4 Օրինակ՝ Հարություն Շահրիկյանն ունեցել է 4 ծածկանուն, սակայն որպես նրա առավել տիպական ծածկանուն նշված է **Ատոմ**-ը (տե՛ս էջ 45 և 66), կամ Նիկողայոս Տեր-Հովհաննիսյանն ունեցել է 5 ծածկանուն, սակայն նրա ծածկանվան դիմաց նշված է հանրահայտ **Դուման**-ը (տե՛ս էջ 57 և 77) և այլն:

3. Ծածկագրված անձնանունների և տեղանունների բովանդակային ընդգրկումը

Ինչպես արդեն ասվեց, ծածկանունների ներկա բառարանում ընդգրկված անձանց և կառույցների գործունեության հիմնական դաշտերն են եղել Օսմանյան Թուրքիան և ցարական Ռուսաստանը: Երկու կայսրություններում էլ ՀՅ Դաշնակցության հայտնի գործիչներն ու կառույցները գործել են խիստ վերահսկողության և հետապնդումների պայմաններում: Ծածկագրերի բառարանն ընթերցողին հնարավորություն է տալիս գաղափար կազմելու ՀՅԴ այս կամ այն գործչի, ազատամարտիկի կամ կուսակցական կառույցի գործունեության վայրի մասին: Բնական է, որ որքան ավելի լայն ու բազմաբնույթ էր տվյալ անձի գործունեությունը, այնքան ավելի շատ էին նրա կեղծանունները: Քանզի մեկ-երկու անգամ իր ինքնության բացահայտումից հետո նա հարկադրված էր մտածել ծածկանունը փոխելու մասին:

Փորձենք ներկայացնել ՀՅԴ գործիչներից առավել շատ ծածկանուն ունեցողներին:

Կուսակցության **առավել ազդեցիկ դեմքերի** մինչ օրս հայտնի ծածկանունների մոտավոր թվային պատկերը հետևյալն է. ՀՅԴ հիմնադիր երրորդությունից Ս. Զավարյանն օգտագործել է 5 ծածկանուն (էջ 23), Քր. Միքայելյանը՝ 7 (էջ 39), իսկ «**գործի մարդ**» Ստ. Զորյանը՝ 8 (էջ 49): Մեծ թվով ծածկանուններ են ունեցել գրող և պետական գործիչ Ավետիս Ահարոնյանը՝ 6 ծածկանուն (էջ 20), իր բազմաբեղուն գործունեությամբ հայտնի Աբրահամ Գյուլխանդանյանը՝ 7 (էջ 20), ՀՅԴ հիմնադիր սերնդի ներկայացուցիչ Հովնան (Հոնան) Դավթյանը՝ 8 (էջ 21), օսմանյան մեջլիսի պատգամավորներ Արշակ Վռամյանը (էջ 53) և մշեցի Գեղամ Կարապետյանը ևս՝ 8-ական (էջ 55), իսկ ՀՀ վերջին վարչապետ Սիմոն Վրացյանը՝ ընդամենը 6 ծածկանուն (էջ 53): Բայց սա դեռ ամբողջը չէ, այլ միայն այն, ինչը մինչ օրս հաջողվել է բացահայտել, քանզի, մեր կարծիքով, գոնե Ռոստոմի ծածկանունների թիվն ավելի մեծ է:

Ինչ վերաբերում է հայդուկներին, ապա սովորաբար նրանց համար իբրև ծածկանուններ կիրառվել են իրենց ծննդավայր-բնակավայրերի, գյուղերի, լեռների, դաշտերի և այլ անվանումներ, օրինակ՝ Սասունցի, Շենիկցի, Տալվորիկցի, Սպաղանաց, բայց ոչ երբեք ավազա-

նի ու մկրտության անունները, քանզի տեղի իշխանությունները դրանք կարող էին բացահայտել ծխամատյանների միջոցով: Հայ ազատամարտի ամենավառ ներկայացուցիչներից հայդուկապետ Գևորգ Ադամյան-Ղազարյանը (Զավուշ) ունեցել է 4 ծածկանուն (էջ 13), Սարգիս Մեհրաբյանը (Խանասորի Վարդան)՝ նույնպես 4, Նիկողայոս Տեր-Հովհաննիսյանը (Նիկոլ Դուման)՝ 5 (էջ 57), իր հեռատես ու զուսպ մարտավարությամբ հանրաճանաչ հայդուկապետ Արմենակ Ղազարյանը (Հրայր-Դժոխք) (էջ 34) և Սեքարեցի Սաքոն՝ 7-ական (էջ 30) և այլն:

Բառարանը ցույց է տալիս, որ ոչ պակաս թվով ծածկանուններ են ունեցել ՀՅԴ կառույցները, այդ թվում՝ կուսակցության բարձրագույն գործադիր մարմին հանդիսացող բյուրոները: Հարկ է արձանագրել, որ կուսակցության Արևելյան և Արևմտյան բյուրոները հանգամանքների բերումով օգտագործել են 5 տարբեր ծածկանուններ (էջ 33): Կուսակցության բարձրագույն ղեկավար մարմինները, նաև կենտրոնական ու տեղական կոմիտեները երբեմն փոխել են իրենց տեղակայման վայրերը: Ուստի հնարավոր հետապնդումներից ու բացահայտումներից խույս տալու համար նրանք հարկադրված են եղել փոփոխել նաև իրենց ծածկանունները:

Նույնը վերաբերում է տեղանունների ծածկագրմանը: Այս առումով բառարանի հեղինակ Ե. Փամբուկյանի համար աղբյուրագիտական հարուստ հիմք են ծառայել հատկապես ՀՅ Դաշնակցության Կենտրոնական արխիվի նյութերը: Դրանցից դուրս են բերված կուսակցության ընդհանուր և ռայոնական ժողովների, խորհրդաժողովների, հավաքների, կենտրոնական ու տեղական կոմիտեների, մարտական խմբերի ու նրանց տեղակայման վայրերի (քաղաք, ավան, գյուղ և այլն) ծածկանունները: Բառարանի հեղինակին հաջողվել է իր գտած «բանալու» միջոցով պարզել տվյալ բնակավայրի բուն անվանումը: Բառարանում այդ բնակավայրերը նշված են **թավատառ**, իսկ երբ «բանալին» հնարավոր չի եղել ճշտել, պարզապես նշվել է տվյալ նահանգի, գավառի կամ գավառակի անվանումը:

Տեղավայրերի ծածկագրված անվանումներն իմաստային առումով արտացոլում են տվյալ վայրի քաղաքական, պատմաաշխարհագրական, հոգևոր և այլ բնույթի հատկանիշները: Բերենք օրինակներ. **Թուրքիա-Տաճկաստանը** ծածկագրված է **Սևաստան**, Ղարաբաղը՝ **Ապառաժ**, Մշո դաշտը՝ **Դուրան**, Կ. Պոլիսը՝ **Վիշապ**, Մոսկվան՝

սկզբում **Եկեղեցի**, ապա՝ **Հրեշ**, Զեյթունը՝ պատմական անվանումով՝ **Ուլնիա**, Իրանի ծովեզրյա Էնզելի քաղաքը՝ **Պորտ-Արտուր**, Սոֆիան՝ **Վիտոշ** և այլն[5]: Հատկանշական է, որ հայ ժողովրդի ազատագրության և հայոց պետականության վերականգնման ճանապարհին առավելապես վտանգ ներկայացնող սուլթանական և ցարական կայսրությունների մայրաքաղաքները՝ Կ. Պոլիսը և Մոսկվան, անվանվել են համապատասխանաբար **Վիշապ** և **Հրեշ**, ինչը վկայում է այդ բռնապետություններին տրված համարժեք գնահատականի մասին:

4. ՀՅԴ-ի հետ շփման մեջ եղած այլ կուսակցությունների և անկուսակցականների ծածկանունները

Թեև գրախոսվող բառարանը նվիրված է զուտ ՀՅ Դաշնակցության ծածկանուններին, սակայն հասկանալի է, որ կուսակցությունը չի գործել մեկուսի և հանգամանքների բերումով հաճախակի շփման մեջ է եղել այլ քաղաքական ուժերի, նրանց գործիչների ու կառույցների հետ, որոնք ևս կրել են ծածկանուններ: Ուստի բառարանում կարելի է հանդիպել այլ քաղաքական կուսակցությունների (Ս. Դ. Հնչակյան, Արմենական, Հայ սահմանադիր ռամկավար, էսէռներ, բոլշևիկներ և այլն) ու նրանց գործիչների բազում ծածկագիր անուններ: Այսպես՝ հիշատակելի են արմենականների գաղափարական հայր Մկրտիչ Փորթուգալյանը՝ **Վարպետ**, Մկրտիչ Թերլեմեզյանը՝ **Ավետիսյան**, Ս. Դ. Հնչակյան կուսակցությունից Ավետիս և Մարո Նազարբեկյանները՝ **Նազարբեկ**, Ռուբեն Խանազատը՝ **Նշան Կարապետյան**, Արփիար Արփիարյանը՝ **Հայկակ**, Գևորգ Ղարաջյանը՝ **Արկոմեդ**, Գաբրիել Կաֆյանը՝ **Շմավոն**, Գարեգին Կոզիկյանը՝ **Եսալեմ**, Կարապետ Թուրսարգսյանը՝ **Աղասի**, Հակոբ Ղազարյանը՝ **Լազո** և ուրիշներ, էսէռներից Լևոն Աթաբեկյանը՝ **Բիխարդ**, և Արշամ Խոնդկարյանը՝ **Սևյան**, ՀԺԿ-ից Առաքել Բաբախանյանը՝ **Լեո**, անկուսակցական Մաղաքիա արք. Օրմանյանը՝ **Բուրդ Մորուք** և այլք[6]:

Մեկ նկատառում. ցանկալի կլիներ, որ այլ կուսակցությունների գործիչների և անկուսակցականների անունների դիմաց՝ փակագծերում, նշվեր, թե ինչ կուսակցության էին նրանք պատկանում կամ

5 Տե՛ս **Փամպուքեան Ե.**, նշվ. աշխ., էջ 138, 142-145, 197, 200, 203, 205, 210:
6 Տե՛ս նույն տեղում, էջ 13, 16-17, 25-26, 28-30, 33, 38, 43, 59, 61, 118:

նրանց անկուսակցական լինելու մասին: Դա միաժամանակ ցույց կտար, թե ՀՅԴ-ն ինչ հասարակական-քաղաքական ուժերի ու շրջանակների հետ է ավելի հաճախ հաղորդակցվել:

5. Դիտարկումներ թվանշանային (շիֆրերով) ծածկագրերի վերաբերյալ

Թվանշանային ծածկագրերի վերծանումը համեմատաբար ավելի բարդ է, քանզի թվայնացված տեքստն ընթերցելու և բովանդակությունը հասկանալու համար պահանջվում է ևս մեկ թվային ծածկագիր՝ «բանալի»: Ծածկագրի այս տեսակն ընթերցողին ավելի հասկանալի դարձնելու համար Ե. Փամբուկյանը գրախոսվող գրքում լրացուցիչ պարզաբանումներ է տվել[7]: Համեմատության կարգով կարելի է ասել, որ թվանշանային ծածկագիրն ինչ-որ չափով հիշեցնում է 19-րդ դարի ամերիկացի գյուտարար Ս. Մորզեի՝ կետերի ու գծերի նիշային, թվային, տառային կոդավորման ու փոխանցման համակարգը, սակայն այն տարբերությամբ, որ Մորզեի նորարարության պարագայում գործադրվել է էլեկտրական հեռագրման եղանակը, իսկ մեր գործիչները հասկանալիորեն կապը պահել են գաղտնի ուղիներով, կապավորների միջոցով:

Թվանշանային ծածկագրմամբ այս կամ այն բովանդակությամբ տեքստը համապատասխան օբյեկտին կամ սուբյեկտին ուղարկելու համար օգտագործվել են, օրինակ, հանրածանոթ հայրենասիրական որևէ երգի կամ բանաստեղծության առաջին տողերը կամ ամբողջական քառյակը: Այդ տեքստում գործածված տառերին հայերեն այբուբենի հաջորդականությամբ տրվել են թվեր, և այդ եղանակով թվագրվել է ամբողջ տեքստը: Այսինքն՝ թվեր բովանդակող տեքստն է տարբեր ձևերով ու միջոցներով ուղարկվել հասցեատիրոջը: Իսկ թվայնացված տեքստը բացելու և ընթերցելու համար հարկ էր ունենալ դրա ընթերցման, ծածկագրի վերծանման «բանալին»: Ուստի Ե. Փամբուկյանը պարզաբանում է, որ շատ հաճախ թվանշանային ծածկագրի վերջում հիշատակվել է տվյալ հանրահայտ ոտանավորի վերնագիրը: Այդպիսի հանրաճանաչ ոտանավորներից հիշատակվում են, օրինակ, Ռ. Պատկանյանի «Արաքսի արտասուքը», Մ. Նալ-

7 Տե՛ս նույն տեղում, էջ 220:

բանդյանի «Ազատությունը», Գ. Դոդոխյանի «Ծիծեռնակը», Կոմիտասի «Կռունկը» և այլն:

Թվանշանային ծածկագրման համար հաճախ օգտագործվել է քիմիական գաղտնի թանաքի բաղադրությամբ պատրաստված մելանագույն լուծույթը, որով գրված տեքստն արտաքուստ չի նկատվել, սակայն կրակի վրա պահելով կարելի էր ընթերցել այն, ուստի հրահանգվում էր, որ գրության հասցեատերը բովանդակությանը ծանոթանալուց հետո անմիջապես ոչնչացներ այն: Նման տեխնոլոգիայի վարպետ է համարվել **Քր. Միքայելյանը**: Վերջերս լույս ընծայված նրա անտիպ նամակների ժողովածուի՝ մի ծածկագրի վերաբերող գրությունում կարդում ենք. «Այս առաջին եւ վերջին անգամ է,– գրում էր Քր. Միքայելյանը Սղերդ քաղաքի կոմիտեին,– որ մենք գրում ենք ձեզ «բաց թանաքով» եւ պաշտօնական թղթի վրայ: Այսուհետ պէտք է գրենք դեղով[8]: Գործի վերաբերեալ կարեւոր նամակները, ապահովութեան համար, պէտք է գրել դեղով: Երկու տեսակի դեղ ունենալու է. մէկը՝ գրելու, միւսը՝ ձեր ստացած նամակները բանալու համար»[9]: Բացի այդ՝ Քր. Միքայելյանը զգուշացնում էր, որ «նոյնիսկ գաղտնի թանաքով գրուած նամակներում պէտք է յատուկ անունները շիֆրէ անէք (ծածկագրով գրէք), այսինքն ոչ թէ տառերով, այլ թւանշաններով: Դրա համար ուղարկում ենք ձեզ հետեւեալ աղիւսակը»: Այնուհետև տրված է թվանշաններով տեքստը (աղյուսակը)[10]: Նույնը բերված է գրախոսվող ժողովածուում[11]: Վերջում Քրիստափորը պատվիրում էր ընկերներին, որ աղյուսակի «բանալին» օգտագործելուց հետո, թվերը պահելով մտքում, իսկույն այրեն այն և ոչ թե պատռեն[12]:

Ե. Փամբուկյանը թվանշանային ծածկագրերի (շիֆրերի) բաժնում զետեղել է նման ծածկագրերի մոտ 30 նմուշ, որոնք մեկը մյուսից հետաքրքրական ու արժեքավոր են: Այստեղ հիշատակելի է 1921 թ. Փետրվարյան ապստամբության նախապատրաստությանը վերաբերող թվանշանային ծածկագիր մի փաստաթուղթ: Հայտնի է, որ ապստամբության նախօրեին՝ փետրվարի 13-ին, Կոտայք գավառի Զառ գյուղում հրավիրվել էր ՀՅԴ Հայաստանի կոմիտեի գաղտնի խորհրդակցու-

8 Խոսքը գաղտնի թանաքի մասին է:
9 «Քրիստափոր Միքայէլեանի անտիպ նամակները», «Վէմ» մատենաշար, թիւ 1, Եր., «Լուսակն», 2020, էջ 174:
10 Տե՛ս նույն տեղում:
11 Տե՛ս **Փամպուքեան Ե.**, նշվ. աշխ., էջ 247:
12 Տե՛ս «Քրիստափոր Միքայէլեանի անտիպ նամակները», էջ 175:

թյուն՝ կոմիտեի անդամ Հ. Տեր-Հակոբյանի (Իրազեկ) նախագահությամբ, որի ժամանակ որոշում էր կայացվել խորհրդային իշխանության տապալման մասին: Եվ ահա թվանշանային ծածկագրմամբ տեքստով, որը կազմել էր ՀՀ խորհրդարանի նախկին պատգամավոր Ավետիս Օհանջանյանը, այդ մասին տեղեկացվում էր ՀՅԴ Բյուրոյի միակ չձերբակալված անդամ Ս. Վրացյանին, ով այդ ժամանակ, Չեկայի հետապնդումներից խույս տալով, թաքնվել էր Կոնդում՝ իր ծանոթներից մեկի բնակարանում[13]: Այդ նույն օրը, Վրացյանի ասելով, Թ. Խանաղյանը թվանշանային ծածկագիր նամակը տարել ու նրան էր հանձնել: Նամակում նշվում էր Հայաստանի կոմիտեի՝ Երևանում ապստամբություն սկսելու որոշման մասին[14]:

Փաստենք, որ սույն թվանշանային ծածկագիրը Ե. Փամբուկյանը գտել է Ս. Վրացյանի անձնական թղթածրարներում (Ս.Վ. 142-5 թղթապանակ): Բառարանում բերված է Ավ. Օհանջանյանի ձեռագրով գրված թվանշանային ծածկագիրը՝ հայկական այբուբենի յուրաքանչյուր տառն իր ծածկագիր թվով, իսկ դրա տակ նշված են Ս. Վրացյանին փոխանցված «բանալի» գաղտնաբառերը:

Այսպիսով՝ Ե. Փամբուկյանի կազմած ծածկանունների բառարանը վկայում է, որ ՀՅԴ-ի ներսում գործել է այն ժամանակներում հեղափոխական կուսակցություններին բնորոշ՝ կապի ու հաղորդակցության մի ուրույն համակարգ, երբ գործնականում կուսակցական ամեն մի կառույց, գործիչ կամ գործունեության դաշտ համարվող վայր ունեցել է իր ծածկանունը: Ավելին՝ նույն անձը կամ սուբյեկտը հանգամանքների բերումով ունեցել է մի քանի ծածկանուն:

Ամփոփենք: Երվանդ Փամբուկյանը բազում տարիների պրպտուն և տքնաջան հետազոտական աշխատանքի շնորհիվ ընթերցողի սեղանին է դրել մի արժեքավոր բառարանային աշխատություն, որն ինքնատիպ է, մնայուն և իր տեսակի մեջ եզակի: Համոզված ենք, որ այն շատ օգտակար կարող է լինել ՀՅ Դաշնակցության պատմության, իսկ ավելի լայն առումով՝ 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայոց պատմության հետագա ավելի խոր և համակողմանի ուսումնասիրման համար: Այն մի օգտաբեր ձեռնարկ է՝ հասցեագրված գալիք սերունդներին, որով առանց մեծ փնտրտուքի հնարավոր է վեր հանել

13 Տե՛ս **Վրացեան Ս.**, Կեանքի ուղիներով: Դէպքեր, դէմքեր, ապրումներ, հատ. Զ, Պէյրութ, 1967, էջ 17:
14 Տե՛ս նույն տեղում: Տե՛ս նաև **Հակոբյան Ա.**, ՀՍԽՀ 1921 թ. ներքաղաքական կյանքի պատմության հիմնահարցերը հայ պատմագրության մեջ, Եր., «Հայկարլի ՍՊԸ» տպագրատուն, 2014, էջ 29:

ՀՅԴ կուսակցության, այսինքն՝ տվյալ դարաշրջանի հայոց պատմության առանցքային դերակատար ուժի տակավին բավարար չլուսաբանված բազում հարցեր: **Քանզի կարելի է ասել, որ սույն ինքնատիպ բառարանն իր ծածկագիր անուններով մեզ է ներկայանում որպես ՀՅ Դաշնակցության «ծածկագրված» կամ ժամանակակից լեզվով ասած՝ «կոդավորված» պատմություն**:

Արարատ Մ. Հակոբյան
Պատմ. գիտ. դոկտոր

Արարատ Մ. Հակոբյան – գիտական հետաքրքրությունների շրջանակում են հայոց նոր և նորագույն պատմության հիմնահարցերը, այդ թվում՝ հայ քաղաքական կուսակցությունների, Հայաստանի առաջին հանրապետության, 1920 թ. թուրք-հայկական պատերազմի, 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի, խորհրդային շրջանի բռնաճնշումների և բազում այլ հիմնահարցեր: Հեղինակ է 20 մենագրության, 12 անհատական կամ կոլեկտիվ ձեռնարկի և ուսումնամեթոդական աշխատանքի, ավելի քան 100 գիտական հոդվածի:

Էլ. հասցե՝ ararathakobyan47@gmail.com

Summary

YERVAND PAMBUKYAN, DICTIONARY OF PSEUDONYMS OF AR FEDERATION (DASHNAKTSUTYUN) (personal names, toponyms, numerical codes), "Vem", issue 5, Yerevan, "Lusakn" publishing house, 2023, 253 pages.

Key words- AR Federation (Dashnaktsutyun), dictionary, cipher, Pambukyan, password, name, toponyms, birth certificate, figure, S. Vratsian, Russia, Turkey, freedom fighter, solution.

Honored Historian Yervand Pambukyan, a grateful and distinguished historian of Armenian historiography, as a result of many years of diligent and painstaking research work, has put together and put on the reader's table a valuable dictionary work, "Dictionary of pseudonyms of AR Federation

(Dashnaktsutyun). (personal names, toponyms, numerical codes)", which is unique in its kind. We are confident that this dictionary can play a very useful role in the future for a deeper and more comprehensive study of the history of the Dashnaktsutyun party in particular, and in a broader sense it will be valuable for the research of the history of Armenia of the late 19th and early 20th centuries.

The reviewed dictionary with its encoded names and toponyms has a unique encyclopedic value, and, as it were, represents the "encrypted" or, in modern terms, "encoded" history of A.R.Federation (Dashnaktsutyun).

Резюме

Ерванд Памбукян, СЛОВАРЬ ПСЕВДОНИМОВ АРФ ДАШНАКЦУТЮН (личные имена, топонимы, числовые коды), серия «Вэм», № 5, Ереван, изд-во «Лусакн», 2023, 253 с.

Ключевые слова – АРФ Дашнакцутюн, словарь, шифр, Ерванд Памбукян, пароль, имя, топоним, свидетельство о рождении, фигура, С. Врацян, Россия, Турция, борец за свободу, решение.

Видный историк армянской диаспоры Ерванд Памбукян в результате многолетней кропотливой исследовательской работы собрал и поставил на стол читателя ценный труд – «Словарь псевдонимов АРФ Дашнакцутюн (личные имена, топонимы, числовые коды)», который уникален в своем роде. Мы убеждены что в научно-познавательном отношении настоящий словарь может сыграть весьма полезную роль в дальнейшем, более глубоком и всестороннем изучении истории АРФ Дашнакцутюн, а в более широком смысле, истории Армении конца XIX и начала XX вв.

Рецензируемый словарь с его закодированными именами и топонимами имеет уникальное энциклопедическое значение, и как бы представляет «зашифрованную» или, выражаясь современным языком, «кодированную» историю АРФ Дашнакцутюн.

REFERENCES

1. “K‘ristap‘or Mik‘ayēleani antip namaknerě”, “Vēm” matenashar, t‘iw 1, Yer., “Lusakn”, 2020 **(In Armenian)**.
2. “Mshak”, T‘iflis, 27 hunisi 1917 t‘. **(In Armenian)**.
3. **Hakobyan A.**, HSKHH 1921 t‘. nerk‘aghak‘akan kyank‘i patmut‘yan himnaharts‘erě hay patmagrut‘yan mej, Yer., “Haykarli SPĚ” tpagratun, 2014 **(In Armenian)**.
4. Hayastani azgayin arkhiv, f. 1457, ts‘. 1, g. 237, t‘t‘. 53, 55, 58 **(In Armenian)**.
5. **P‘ampuk‘ean Ye.**, H.Y. Dashnakts‘ut‘ean tsatskanunneru baṛaran (andznanunner, teghanunner, t‘uanshanayin tsatskagrer), “Vēm” matenashar, t‘iw 5, Yer., “Lusakn”, 2023 **(In Armenian)**.
6. **Vrats‘ean S.**, Keank‘i ughinerov: Dēpk‘er, dēmk‘er, aprumner, hat. Z, Pēyrut‘, 1967 **(In Armenian)**.